

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

**9. -----ը Լուսավորչի տոհմից վերջին կաթողիկոսն է:
(1 միավոր)**

**10. Հին Կտակարանը բաղկացած է ----- գրքերից, որոնցում արտացոլված են Աստծո կողմից մարդկանց համար սահմանված կանոններ և օրենքներ, խրատներ և պատգամներ, Փրկչի՝ Հիսուս Զրիստոսի աշխարհ գալու մասին կանխատեսումներ:
(1 միավոր)**

**11. 1441 թ. Աղթամարում գահակալում էր ----- կաթողիկոսը, ով մեծ աջակցություն ցուցաբերեց կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու գործին:
(1 միավոր)**

**12. Ըստ Մովսես Կաղանկատվացու վկայության՝ Հայոց ո՞ր թագավորն է տարվա օրերի թվով եկեղեցիներ կառուցել:
(1 միավոր)**

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4-5 փաստից

**13. Ժողովրդական սովորությունը համապատասխանեցնել նրա հետ կապված տոնին.
(1 միավոր)**

- 1) Նախորդ օրը գիշերը աղջիկները ծաղիկներ էին հավաքում, յոթ աղբյուրից ջուր էին լցնում սափորի մեջ, հավաքած ծաղիկներով փունջ էին կապում, դրանցով ծածկում սափորը և այն թողնում դրսում:
- 2) Ուրբաթ երեկոյան տների դռների մոտ կամ տանիքին սկուտեղով փոխինդ էին դնում:
- 3) Նախորդ օրը երեկոյան երիտասարդները ուռենու ճյուղեր էին կտրում և բերում եկեղեցի, իսկ տոնի օրը նորապսակ հարսները ամուսնանալուց հետո առաջին անգամ գնում էին իրենց հայրական տուն՝ հարազատներին այցելության:
- 4) Մարդիկ իրար հյուր էին գնում կամ ամբողջ ընտանիքով հավաքվում էին տոնական սեղանների մոտ և ուրախանում, այդ օրվա գլխավոր ուտելիքը յուղով փլավն էր:

- ա) Ս. Սարգսի տոն
- բ) Ծաղկազարդ
- գ) Բուն Բարեկենդան
- դ) Համբարձման տոն
- ե) Տյառնընդառաջ

1	
2	
3	
4	

**14. Հայոց կաթողիկոսների անունը համապատասխանեցնել նրանց օրոք աթոռանիստ կենտրոն դարձած տեղանվանը.
(1 միավոր)**

- 1) Գևորգ Բ. Գառնեցի
- 2) Գրիգոր Գ. Պահլավունի
- 3) Հովհաննես Ե. Դրասխանակերտցի
- 4) Անանիա Ա. Մոկացի
- 5) Բարսեղ Ա. Անեցի

- ա) Սիս
- բ) Չվարթնոց
- գ) Արգինա
- դ) Աղթամար
- ե) Հռոմկլա
- զ) Շուղրի Կարմիր վանք

1	
2	
3	
4	
5	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացությունն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Տրված տոները դասավորել ըստ տարվա ընթացքում տոնման հաջորդականության. (1 միավոր)

- ա) Սրբոց Վարդանանց տոն
- բ) Ծաղկազարդ
- գ) Սրբոց Ղևոնդյանց տոն
- դ) Ս. Հարություն
- ե) Համբարձում

1	
2	
3	
4	
5	

16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)

- ա. Անիի Կաթողիկե Մայր տաճարի կառուցում
- բ. Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնում
- գ. Վանի Ս. Խաչ եկեղեցու կառուցումը Մանուել ճարտարապետի կողմից:
- դ. Արմաշի դպրեվանքի հիմնում:
- ե. Կաթողիկոսական Աթոռի տեղափոխումը Հռոմկլա:

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնադրյալով՝ կազմված 2 հարցից

17. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին.

«Նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ. Թեոհրա անունով մի կոստանդնուպոլսեցի իմաստասեր լսելով սրա հռչակը՝ իր գրքերը բառնալով գրաստների վրա, եկավ փորձելու և վերահասու լինելու նրա իմաստությանը: Եվ շատ օրեր գրուցեց նրա հետ ու գտավ ամեն բանի մեջ հմուտ, նաև Սուրբ Հոգով լցված: Նա քաղցր եղանակով գրեց Սուրբ պատարագի քարոզը, նույն խոհականությամբ՝ շարականների տները, իր անվան տառերով երկու գանձեր՝ մեկը «Վարդավառի», մյուսը՝ «Աստվածածնի փոխման»:

1) Ո՞ւմ աշխատությունից է հատվածը: (1 միավոր)

2) Ո՞ւմ մասին է խոսքը: (1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ` 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. (1 X 2 = 2 միավոր)

- 1) Կյանքի վերջին տարիներին Ս. Գրիգոր Լուսավորիչն առանձնացել էր Նպատ լեռան վրա գտնվող այրերից մեկում:
- 2) 1932 թ. ազգային-եկեղեցական ժողովում կաթողիկոս ընտրվեց Գևորգ Զ. Չորեքչյանը:
- 3) 1198 թ. հունվարի 6-ին Լևոնը թագադրվեց Հռոմի պապի ներկայացուցչի ձեռքով և օծվեց Հայոց կաթողիկոսի կողմից:
- 4) Դրոշմի խորհուրդը կատարվում է օրինված ջրով:
- 5) Ս. Վարդան Մամիկոնյանը Ս. Սահակ Պարթևի թոռն էր:

19. Տրված բացատրություններից ո՞ր երկուսն են ճիշտ. (1 x 2 = 2 միավոր)

1. Աշտիշատի եկեղեցական ժողովում արգելվեցին բազմակնությունը, անչափահասների ամուսնությունը, ինչպես նաև ամուսնությունը մերձավոր արյունակիցների միջև:
2. Զրիստոնեական եկեղեցու սրբերի և նահատակների կյանքն ու գործը ներկայացնող ժողովածուներ և գրքեր թարգմանելու համար Գրիգոր Բ. կաթողիկոսն արժանացել է *Վկայասեր* անվանը:
3. Զաղկեդոնի ժողովն ընդունեց «Մի աստվածություն, երեք անձինք» բանաձևը:
4. Մուհամմադի մահվանից հետո նրա հետևորդները մարգարեի քարոզները հավաքեցին մի ժողովածուի մեջ, որը հետագայում կոչվեց «Թալմուդ»:
5. Հովհաննես Գ. Օձնեցի կաթողիկոսի պատվերով Անանիա վարդապետ Սանահնեցին գրել է «Խոսք հակաճառության ընդդեմ երկաբնակների» ճառը:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել Հայոց եկեղեցու պայքարը ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ Մկրտիչ Ա. Խրիմյանի կաթողիկոսության տարիներին: